

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1552-Լ որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջով և ի կատարումն ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 52 արձանագրային որոշմամբ հաստատված Խորհրդի աշխատակարգի՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը շարունակում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարին կից հասարակական խորհրդի կազմավորման գործընթաց: Հասարակական խորհրդի կազմավորման նպատակներից է խթանել հանրային մասնակցությունը և բարձրացնել ԱԻ նախարարության գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

Խորհրդի կազմում կարող են ընդգրկվել հասարակական կազմակերպություններ, զանգվածային լրատվության միջոցներ, ազգային փոքրամասնություններ ներկայացնող կազմակերպություններ, ինչպես նաև այլ շահագրգիռ անձինք, որոնց գործունեության բնույթը համընկնում է Նախարարության գործունեության հիմնական ուղղություններին, համապատասխան ոլորտում ունեն առնվազն 2 տարվա մասնագիտական փորձառություն (իրականացրել կամ մասնակցել են ոլորտին առնչվող ծրագրերի, փորձագիտական աշխատանքների իրականացմանը, ունեն ոլորտին առնչվող հրապարակումներ, մասնակցել են նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբերի, հանձնաժողովների աշխատանքներին, ոլորտին առնչվող հարցերով համագործակցել են միջազգային կազմակերպությունների հետ և այլն) և որոնց մասնակցությունը Խորհրդի աշխատանքներին կարող է նպաստել Խորհրդի առջև դրված խնդիրների և նպատակների առավել արդյունավետ իրականացմանը: Խորհրդի կազմում չեն կարող ընդգրկվել այն անձինք կամ կազմակերպությունները, ովքեր տվյալ պահին ֆինանսավորում են (դրամաշնորհ կամ ծառայությունների մատուցում՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն) ստանում Նախարարությունից:

Խորհրդի կազմում ընդգրկվելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարին./**ձևը կցվում է/**
- Ինքնակենսագրություն.
- բնութագիր - երաշխավորություն առաջադրող կազմակերպության կողմից.
- տեղեկանք առաջադրող կազմակերպության գործունեության մասին:

Հայտերն ընդունվում են **ս.թ. փետրվարի 20-ից մինչև մարտի 15-ը:** Հայտերն ուղարկել **mes@mes.am** էլ. փոստով, **mes.am** կայքով կամ փոստով՝ **ք. Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ., Ա. Միկոյան 109/8:**

Տեղեկությունների համար զանգահարել **010-31-77-20** հեռախոսահամարով: